ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտի 27-ին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հանրապետության գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը։

Ժողովը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Հաշվետու ժամանակաշրջանում, ասաց նա, ակադեմիայի գիտական կոլեկտիվների գործունեությունը նպատակամղված է եղել հետազոտությունների հետագա զարգացմանը, գիտական հաստատությունների նյութատեխնիկական բազայի, գիտության և արտադրության կապի ընդլայնմանը, ակադեմիայի կազմում գիտական նոր հիմնարկների, լաբորատորիաների, կոնստրուկտորական բյուրոների ստեղծմանը։ Կենսագործելով կուսակցության առաջադրած խնդիրները, գիտական կոլեկտիվներն իրենց հիմնական ուշադրությունը բևեռել են հատկապես հիմնարար այն հետազոտությունների ուղղությամբ, որոնք անմիջականորեն նպաստում են գիտատեխնիկական առաջադիմությանը և հատկապես կարևոր են արդյունաբերության առաջատար ճյուղերի զարգացման, ժողովրդական տնտեսության մեջ գիտական արդյունքները արմատավորելու համար։ Գիտությունների ակադեմիայի մի շարք ստորաբաժանումներում, նշեց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը, որտեղ ամուր հիմքերի վրա են դրված աշխատանքները, առկա են շոշափելի հաջողություններ, որոշակի ու ճշգրիտ են հեռանկարային պլանները, որոնք նպատակաուղղված են ժողովրդատնտեսական խոշոր խնդիրների լուծմանը։

Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտն այնուհետև խոսեց հասարակական գիտությունների գծով ձեռք բերված նվաճումների, գիտական համբնթացի կառավարման, արտադրության հետ գիտության կապի, կադրերի պատրաստման, հետազոտությունների որակի բարձրացման հարցերի մասին։ Նա հույս հայտնեց, որ Հանրապետության գիտության աշխատողներն արժանի գործերով կնշանավորեն Վ. Ի. Լենինի ծննդյան 110-րդ տարեդարձի, Սովետական Հայաստանի 60-ամյակի տարին։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1979 թվականի գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ Հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս քարտուղար, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Գ. Ա. Գալոյանը։ Նա նշեց, որ ակադեմիայի հիմնարկները հաշվետու տարում նշանակալի աշխատանք կատարեցին հետազոտությունների արդյունավետության ու որակի հետագա բարձրացման ուղղությամբ։ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ինստիտուտների, գիտական մյուս հիմնարկների կոլեկտիվները համախմբելով իրենց ջանքերը, հաջողությամբ լուծեցին ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերի համար առաջնահերթ նշանակություն ունեցող, սկզբունքորեն նոր գիտական գաղափարների և տեխնիկական լուծումների մշակման հետ առնչվող մի շարք հիմնարար խնդիրներ։ Զգալի աշխատանք է տարվել կադրերի պատրաստման, գիտական հիմնարկների կառուցվածքի բարելավման, ինչպես նաև ժամանակակից սարքավորումներով դրանց ապահովման, նյութատեխնիկական բազայի ամրապնդման ընթացքում։ Ինչպես և նախորդ տարիներին, ուշադրության կենտրոնում են գտնվել արտադրության հետ գիտության կապի ամրապնդման, ժողովրդական տնտեսության մեջ գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներդրման հարցերը։ Գիտությունների ակադեմիայի հիմնարկները սերտ գիտական համագործակցությամբ են աշխատել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի և հանրապետական ակադեմիաների համապատասխան հիմնարկների հետ։ Հաշվետու տարում ընդլայնվել և ամրապնդվել են գիտական համագործակցության այնպիսի ձևեր և մեթոդներ, ինչպիսիք են համատեղ գիտական սեմինարները, նստաշրջանները և կոնֆերանսները, փորձի, գիտական հետազոտությունների դեռով ձեռք բերված արդյունքների փոխանակումը։

Նշանակալի աշխատանք է կատարվել Հանրապետությունում տարվող գիտահետազոտական աշխատանքների կոորդինացման նպատա-

կով։ Այս հարցին էր նվիրված Հայկական ՍՍՀ գիտական հիմնարկների ու բուհերի բնական և հասարակական գիտությունների բնագավառում գիտական գործունեության կոորդինացման խորհրդի 1-ին նստաշրջանը, որը կայացավ 1979 թվականի հոկտեմբերին։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գործունեության հիմնական արդյունքների վերաբերյալ զեկուցման քննարկմանը մասնակցեցին հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Վ. Հ. Ղազարյանը և Մ. Գ. Մանվելյանը։

Մարտի 28-ին «Վ. Ի. Լենինը և Հայաստանը» թեմայով զեկուցեց ակադեմիկոս Ռ. Բ. Ղարիբջանյանը։ «Հետազոտություններ օլիգոմերների քիմիայի բնագավառում» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ս. Գ. Մացոյանը։ «Սանրէական ինսեկտիցիդները, դրանց ներկան և ապագան» թեմայով զեկուցում կարդաց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Է. Գ. Աֆրիկյանը։

Տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պարգևների ամենամյա ավանդական հանձնում։ Բեղմնավոր գիտական գործունեության համար մեծարման գրեր շնորհվեցին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Ռ. Բարայանին, Բ. Ն. Առաքելյանին, Մ. Գ. Ներսիսյանին։

Գիտության զարգացման գործում ներդրած մեծ ավանդի համար Վաստակագիր ստացան հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից անդամներ Է. Բ. Ադայանը, Հ. Գ. Բակլավաջյանը, Ա. Հ. Դարբինյանը, Ս. Գ. Մացոյանը, Գ. Խ. Սարգսյանը, Մ. Լ. Տեր-Միքայելյանը, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Ռ. Մ. Ղալաչյանը, պատմական գիտությունների դոկտոր Վ. Բ. Բարխուդարյանը։

1979 թվականի գիտահետազոտական հաջող գործունեության համար 32 գիտնականների հանձնվեցին գովեստագրեր։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ժողովին մասնակցում էին ընկ. ընկ. Բ. Ե. Սարկիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը, Գ. Ս. Անդրեևը, Կ. Լ. Դալլաքյանը, Լ. Ն. Ներսիսյանը, Յա. Ի. Խաչիկյանը։

Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ